ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ

ԼՐԱՑՈՒՄ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 2017

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ
ԼՐԱՑՈՒՄ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Թողարկողի ֆիրմային անվանումը, կազմակերպաիրավական ձևը
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1,
հեռ. (+374 10) 511-200, (+374 10) 511-211,
էլ.փոստ՝ post@conversebank.am,
ինտերնետային կայք՝ www.conversebank.am
«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գլխավոր տեղաբաշխողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը
Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1,
հեռ. (+374 10) 511-200, (+374 10) 511-211,
էլ.փոստ՝ post@conversebank.am,
ինտերնետային կայք՝ www.conversebank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Արժեթղթերի տեսակը՝	Անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	Ոչ փաստաթղթային
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ընդհանուր քանակը՝	100,000 (Մեկ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 10,000 (Տասը հազար) հատ ՀՀ դրամով
Արժեթղթերի թողարկման ընդհանուր ծավալը՝	10,000,000 (Տասը միլիոն) ԱՄՆ դոլար, 1,000,000,000 (Մեկ միլիարդ) ՀՀ դրամ
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի ծավալի և անվանական արժեքի
Արժեթղթերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեթղթերի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը՝	Կիսամյակային
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ		
ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ		
1.1	Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	7
1.2	Ռիսկային գործոններ	11
1.3	Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները	12
1.4	Բանկի աուդիտն իրականացնող անձինք	13
1.5	Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ տեղեկատվություն	14
1.5.1	Բանկի Խորհուրդը	14
1.5.2	Բանկի Գործադիր մարմինը	14
1.6	Բանկի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	15
1.7	Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները	15
1.8	Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը	19
1.9	Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների հրապարակումը	19
1.10	Պարտատոմսերի ռեեստրի վարումը	19
1.11	Ամփոփ ֆինանսական տվյալներ	20
ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		
2.1	Ռիսկային գործոններ	22
2.2	Հիմնական տեղեկատվություն	23
2.3	Պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվություն	24
2.4	Առաջարկի ժամկետները և պայմանները	32
2.4.1	Առաջարկի պայմաններ, առաջարկի վիճակագրություն	32
2.4.2	Տեղաբաշխման պլան	36
2.4.3	Առաջարկի գին	36
2.4.4	Տեղաբաշխումը	37
2.5	Առևտրին թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	38
2.6	Լրացուցիչ տեղեկատվություն	39
ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ		
3.1	Անկախ աուդիտորները	40
3.2	Ռիսկային գործոններ	40
3.3	Տեղեկատվություն Բանկի մասին	50
3.4	Բիզնեսի նկարագիրը	52
3.5	Բանկի կառուցվածքը	58
3.6	Զարգացման վերջին միտումները	58
3.7	Շահույթի կանխատեսումը և գնահատումը	59
3.8	Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները	62
3.8.1	Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները	62
3.8.2	Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ	77
3.8.3	Շահերի բախումը	81

3.9	Հսկող անձինք	81
3.9.1	Բանկի կողմից թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ	82
3.10	Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ	84
3.11	Էական պայմանագրեր	87
3.12	Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը եվ երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	87
3.13	Այլ տեղեկատվություն	87
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ		
Հավելված 1	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական իրավաբանական անձանց համար	89
Հավելված 2	«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)	91
Հավելված 3	Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը	94
Հավելված 4	Թողարկման վերջնական պայմաններ	95
Հավելված 5	Բանկի մասնաճյուղերի ցանկը	104
Հավելված 6	Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը	106
Հավելված 7	Ֆինանսական հաշվետվություններ	107

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը:

Ստորագրող անձինք

Արմեն Տեր-Տաճատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Խուան Կարլոս Օսկոիդի
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)
Կոնվերս Բանկ ՓԲԸ Խորհրդի անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Խոսե Լուիս Պերսիկո
Կոնվերս Բանկ ՓԲԸ Խորհրդի անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Արթուր Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն
Տնօրինության նախագահ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Դավիթ Ազատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հաշվապահական հաշվառման վարչության պետ
Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Գոհար Հարությունյան
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Հրանտ Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Վահե Դալյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի
կառավարման գծով տնօրեն
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Արթուր Նահապետյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Բիզնեսի զարգացման գծով տնօրեն
Տնօրինության անդամի ժ/պ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Գրիգորի Բաղդասարյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մանրածախ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Ռուստամ Բադալյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն ամփոփաթերթը դիտվում է որպես ազդագրի ներածական համառոտ նկարագրություն և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական ազդագրի վրա:
Ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու դեպքում (այդ թվում նաև թարգմանությանը վերաբերող մասով) ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձինք կրում են քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:
Ներդրողը կարող է ձեռք բերել սույն փաստաթուղթը և դրան կից փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի Գլխամասային գրասենյակում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

1.1 Բանկի և Բանկի գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն
ռուսերեն՝ закрытое акционерное общество “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” closed joint-stock company
Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ռուսերեն՝ ЗАО “Конверс Банк”
անգլերեն՝ “Converse Bank” CJSC
Բանկի պետական գրանցման վայրն է՝
ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1:
Բանկի պետական գրանցման համարն է 57:
Բանկի գտնվելու վայրն է՝
ՀՀ, 0010, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1:
Կապի միջոցները՝
հեռ.՝ (+374 10) 511-200, (+374 10) 511-211
ֆաքս՝ (374 10) 511-212
էլ. Փոստ post@conversebank.am,
Ինտերնետային կայք՝ www.conversebank.am:
Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:
Ընկերության կազմակերպաիրավական ձևը՝ փակ բաժնետիրական ընկերություն (գրանցված 20.12.1993թ.):
Պարտատոմսերում ներդրումների հետ կապված հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել Բանկի համապատասխան մասնագետների հետ հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 511-206, 511-247:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ հանդիսանում է «Կոնվերս Բանկ» փայատիրական բանկի իրավահաջորդը, որն էլ իր հերթին հանդիսանում է «Հյուսիս-Հայկական» փայատիրական բանկի իրավահաջորդը:
Բանկը հիմնադրվել է 1993 թ. որպես «Հյուսիս-Հայկական» փայատիրական բանկ: 1994թ. վերանվանվել է որպես «Կոնվերս բանկ» փայատիրական բանկի:
Ընկերությունն առաջին անգամ գրանցվել է 20.12.1993 թ. գրանցման վկայական թիվ 0164, գրանցման համարը 57, որպես «Հյուսիս-Հայկական» փայատիրական բանկ: Որպես «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերություն Բանկը վերակազմավորվել է 1997թ.-ին: «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը գրանցվել է ՀՀ, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում, իսկ Բանկի գրանցող մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկը (Այսուհետ ՀՀ ԿԲ):
Բանկը փաստացի գործունեություն է իրականացնում 1993 թվականից:
Բանկի ֆիրմային անվանումը պաշտպանված է ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և գրանցված է ՀՀ արտոնագրային վարչությունում (ֆիրմային անվանման գրանցման մասին 03.06.1999թ. որոշում, գրանցման համարը 107913):
Բանկի ապրանքային նշանն է՝

ConverseBank

Բանկի հիմնադրումը: Բանկն ավելի քան 20 տարի է գործունեություն է ծավալում ՀՀ բանկային շուկայում: Բանկի հիմնադիր և հիմնական բաժնետեր է հանդիսանում «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» էլէլՍի-ն:
Բանկի առաքելությունն է դառնալ առաջին նախընտրության բանկ Հայաստանում:
Բանկը հաճախորդներին ծառայություններ մատուցելիս որդեգրել է հետևյալ արժեքները՝

- Հասանելիություն
- Մատչելիություն
- Նորարարություն
- Տեղեկացվածություն
- Աջակցություն
- Սրտացավություն

Բանկը կիրառում է հետևյալ կորպորատիվ արժեքները՝

- Թիմային աշխատանք
- Պատասխանատվություն
- Որոշումների կայացման իրավասությունների պատվիրակում
- Ազնվություն
- Ուսուցում և կատարելագործում
- Ոգևորություն

Բանկի կանոնադրական կապիտալը: Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է սովորական և արտոնյալ բաժնետոմսերից: Բանկի բաժնետերերն են. «Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի (80.94%) և արտոնյալ բաժնետոմսեր (333 հատ), ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ ԲԻ.ՎԻ.

Ընկերությունը՝ սովորական բաժնետոմսերի (14.06%), Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 54,722 (Հիսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:

Բիզնեսի նկարագիրը: Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, բանկային հաշիվների բացումն ու սպասարկումը, տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրումը և սպասարկումը, վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, այդ թվում՝ ներհանրապետական և միջազգային (ներառյալ՝ արագ փոխանցումների համակարգերով) փոխանցումների իրականացումը, հեռակառավարման համակարգերի տրամադրումը, այլ բանկային ծառայությունների մատուցումն ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:

Բանկի համար հիմնական գործունեության ոլորտներից է հանդիսանում վարկավորումը: «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն տրամադրում է վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով: Վարկերի գծով մարումները կատարվում են այն արժույթով, որով տրամադրվել են, իսկ վարկերի գծով հաշվարկված տոկոսագումարները մարվում են ՀՀ դրամով (արտարժութային վարկերի դեպքում՝ հաշվարկված մարման օրվա դրությամբ Բանկի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքով): Բանկը վարկեր է տրամադրում ինչպես սեփական միջոցների, այնպես էլ միջազգային ծրագրերի (Համաշխարհային բանկի և "Գերմանա-հայկական" հիմնադրամի) շրջանակներում ներգրավված միջոցների հաշվին:

Բանկը սեփական միջոցներով իրականացնում է՝

1. Սպառողական վարկերի տրամադրում, այդ թվում՝
   - Ապրանքների/ծառայությունների ապառիկ ձեռքբերման նպատակով ֆինանսավորում,
   - Վարկային քարտերով սպառողական վարկեր,
   - Հիփոթեքային վարկեր,
   - Այլ սպառողական վարկեր:
2. Առևտրային վարկերի տրամադրում:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործունեության հիմնական ոլորտներից է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերից ավանդների ընդունումը: Որոշ ավանդներ Բանկն ընդունում է նաև առցանց:

Բանկն ավանդներն ընդունում է Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ ձևով: Ավանդների տոկոսների վճարումը կատարվում է կանխիկ և անկանխիկ տարբերակով՝ կախված հաճախորդի ցանկությունից: Հաշվարկված տոկոսների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Բանկն առաջարկում է ավանդների հետևյալ տեսակները՝ որոշ ավանդների դեպքում նաև առցանց.

- Ցպահանջ
- Ժամկետային
- Ավելացման/նվազեցման իրավունքով
- Բաշխման ժամանակահատվածով
- Երեխաների անունով կուտակային
- Կենսաթոշակառուների համար նախատեսված
- Հաճախորդին ցանկալի ժամանակահատվածով:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ առաջարկում է նաև հետևյալ ծառայությունները.

1. Բանկային հաշիվների բացում ու սպասարկում,
2. Տեղական և միջազգային վճարային համակարգերի վճարային քարտերի տրամադրում և սպասարկում,
3. Վճարահաշվարկային ծառայությունների մատուցում, այդ թվում՝ ներհանրապետական և միջազգային /ներառյալ՝ արագ փոխանցումների համակարգերով՝ Converse Tranfer, Anelik, Unistream, Money Gram, փոխանցումների իրականացում,
4. Հեռակառավարման համակարգերի տրամադրում,
5. Դիլինգային և բրոքերային ծառայությունների մատուցում,
6. Այլ բանկային ծառայությունների մատուցում:

Ընդհանուր առմամբ, Բանկը շարունակում է կատարելագործել ծառայությունների մատուցումը՝ հիմնական շեշտը դնելով նորարարությունների ոլորտում ներդրումներ կատարելու վրա՝ համալրելով առցանց բանկային ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ սպասարկում է իրականացնում Գլխամասային գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակում (ք. Երևան), Երևանում, Հայաստանի ինը մարզերում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում տեղակայված 34 մասնաճյուղերում: Մասնաճյուղերի ցանկը ներկայացված է Հավելված 5-ում:

1.2 Ռիսկային գործոններ

Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկեր: Ռիսկի ստանձնումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է ու հետևանքը և ներդրողը պետք է հաշվի առնի, որ պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են ոչ միայն Թողարկողի ֆինանսատնտեսական վիճակից և գործունեության արդյունքից (Թողարկողի ռիսկ), այլ նաև ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից (շուկայական ռիսկ):

Շուկայում տեղի ունեցող անբարենպաստ փոփոխությունները կարող են հանգեցնել Բանկի կողմից ստանձնած պարտավորությունների չկատարմանը կամ շուկայում պարտատոմսերի գնի կամ իրացվելիության անկմանը: Նշվածի արդյունքում ներդրողը կարող է կորցնել ներդրված գումարը կամ դրա մի մասը:

Պոտենցիալ ներդրողը, մինչև պարտատոմսերում ներդրում կատարելու մասին որոշում ընդունելը, պետք է շրջահայաց լինի և հաշվի առնի ստորև բերված ռիսկերը և սույն ազդագրում ներառված այլ տեղեկատվությունը, ինչպես նաև իր փորձը, նպատակները, ֆինանսական ռեսուրսները, ռիսկի ախորժակը և եկամուտի սպասումները, ինչպես նաև հաշվի առնի, որ ստորև բերված ռիսկերը ոչ բոլոր ռիսկերն են, որ թողարկողը կարող է երբևէ կրել: Թողարկողը բացահայտել է միայն այն ռիսկերը, որոնք նա համարել է էական: Ենթադրաբար, կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք թողարկողն այժմ չի համարում էական կամ որոնք ներկայումս հայտնի չեն: Ցանկացած այդպիսի ռիսկ կարող է թողնել վերևում նշված ազդեցությունն ու հետևանքը:

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն: Կարևորագույն ռիսկերն են վարկային ռիսկը, շուկայական ռիսկը, իրացվելիության ռիսկը, ինֆլյացիոն կամ գնողունակության ռիսկը, գործառնական ռիսկը, իրավական ռիսկը, տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) հետ առնչվող ռիսկերը:

<u>Մրցակցություն:</u> ՀՀ բանկային ոլորտում առկա է մրցակցության բարձր մակարդակ, ինչը կարող է բացասաբար ազդել Բանկի ցուցանիշների վրա և այդ պայմաններում Բանկը չի կարող երաշխավորել պլանավորած ցուցանիշների կատարումը: Սակայն Թողարկողը նույնպես ակտիվորեն մասնակցում է ոլորտի բոլոր գործընթացներին՝ ապահովելով իր կայուն դիրքը համակարգում:

<u>Վարկային ռիսկ:</u> Բանկի գործունեությունն ենթարկվում է վարկային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարման հետ, որի արդյունքում Բանկը կարող է վնասներ կրել: Վարկային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում:

<u>Գործառնական ռիսկը</u> Գործառնական ռիսկը Բանկում գործարքների սահմանված կարգի և ընթացակարգերի՝ գործող օրենսդրությանն անհամապատասխանության կամ դրանց խախտման, Բանկի աշխատակիցների անիրազեկության կամ սխալների, Բանկի կողմից կիրառվող տեղեկատվական, տեխնոլոգիական և այլ համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների անբավարարության հետևանքով վնասների առաջացման ռիսկն է:

Բանկերի, մասնավորապես «Կոնվերս Բանկ» ՓԲԸ գործունեության հետ կապված ռիսկերի, դրանց զսպման ու բացասական ազդեցության նվազեցման ուղղությամբ

Բանկի կողմից իրականացվող միջոցառումների առավել մանրամասն նկարագրությանը կարող եք ծանոթանալ Ծրագրային ազդագրի 3.2 կետում (էջ 40):
Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող պարտատոմսերում ներդրումը կապված է որոշակի ռիսկերի հետ:
Շուկայական ռիսկը շուկայական փոփոխականների (տոկոսադրույքներ, արտարժութային փոխարժեքներ կամ տոկոսադրույքներ) տատանման հետևանքով ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ իրական արժեքի տատանման և դրա հետևանքով վնաս կրելու հավանականությունն է:
Արտարժութային ռիսկ: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դեպքում առկա է արտարժութային ռիսկ: Այս ռիսկը կարող է առաջանալ փոխարժեքի կտրուկ տատանումների, արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ոչ ճիշտ կառավարման արդյունքում՝ հանգեցնելով կորուստների: Օրինակ, ԱՄՆ դոլարի արժեզրկման դեպքում ԱՄՆ դոլարով պարտատոմսեր ձեռք բերած ներդրողը կունենա որոշակի կորուստներ: Ներդրողը պարտատոմսերում ներդրում կատարելու նպատակով արտարժույթի փոխանակում կատարելիս նույնպես պետք է հաշվի առնի, որ փոխարժեքի անբարենպաստ տատանման հետևանքով կարող է ստանալ իր սպասվածից քիչ եկամուտ:
Տոկոսադրույքի ռիսկ: Հայաստանի ֆինանսական շուկայում առկա տոկոսադրույքների տատանումը կարող է բացասաբար ազդել պարտատոմսերի եկամտաբերության և իրացվելիության ցուցանիշների վրա: Շուկայում տոկոսադրույքների բարձրացումը կարող է բերել նաև Թողարկողի պարտատոմսերի եկամտաբերության վերանայման (բարձրացման), ինչն իր հերթին կբերի գնի անկման և հակառակը:
Իրացվելիության ռիսկ: Շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխության կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման արդյունքում կարող է առաջանալ իրացվելիության ռիսկ: Թողարկողը պարտատոմսերի իրացվելիությունն ապահովելու համար նախատեսում է գործողությունների պլան, սակայն չի կարող երաշխավորել, որ դրանք երկրորդային շուկայում ցանկացած պահին հնարավոր կլինի վաճառել կամ գնել ցանկալի գնով:
Առաջարկվող պարտատոմսերի հետ կապված ռիսկերի առավել մանրամասն նկարագրությանը կարող եք ծանոթանալ Ծրագրային ազդագրի 2.1 կետում (էջ 22):

1.3 Բանկի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն Հայաստանի առաջատար բանկերից է: Բանկի հիմնական նպատակն է կապիտալի շարունակական, հուսալի տեղաբաշխումը, ինչպես նաև բանկի հաճախորդներին ժամանակին որակյալ բանկային ծառայությունների մատուցումը: Բանկի հավասարակշռված քաղաքականությունը կայունության, ինչպես նաև ֆինանսատնտեսական բարձր ցուցանիշների գրավականն է:
Անձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմը Բանկին թույլ է տալիս արագ արձագանքել շուկայական ենթակառուցվածքում առկա փոփոխություններին, կենտրոնացնել և ուղղել անհրաժեշտ դրամական միջոցները առավել հեռանկարային ուղղություններում: Բանկի առաջնային ուղղություններից են նոր բանկային

տեխնոլոգիաների կիրառումը, ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների կապիտալի հուսալի տեղաբաշխումը, վերջիններիս բանկային ծառայությունների ամբողջական փաթեթի առաջարկումն ու տրամադրումը:
Տարեցտարի Բանկի զարգացմանը և ընդլայնմանը զուգընթաց ավելացել է նաև Բանկի աշխատակիցների թվաքանակը: 30.12.2016թ.-ի դրությամբ բանկի աշխատակիցների ընդհանուր թվաքանակը կազմել է 783: Ստորև ներկայացված աղյուսակը հնարավորություն կտա համառոտ պատկերացում կազմել Բանկի գործունեության արդյունքների մասին:

հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	31/12/16 (Աուդիտ անցած)	31/12/15 (Աուդիտ անցած)	31/12/14 (Աուդիտ անցած)
ԱԿՏԻՎՆԵՐ	190,993,270	158,903,165	146,847,360
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	158,815,267	138,201,740	124,343,077
ԿԱՊԻՏԱԼ	32,178,003	20,701,425	22,504,283
Զուտ տոկոսային եկամուտ	7,071,897	6,496,275	6,330,190
Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ)	9,971,725	9,209,400	9,946,000
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	1,508,590	-616,073	2,368,195
Շահույթ (վնաս) հարկումից հետո	1,565,032	-663,583	2,062,501
Ակտիվների շահութաբերության գործակիցը (ROA, %)	0.94%	-0.44%	1.55%
Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (ROE, %)	5.84%	-2.97%	9.86%

1.4 Բանկի աուդիտն իրականացնող անձինք

2011-2014թթ. ընթացքում Բանկի արտաքին աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն՝ հասցեն ՀՀ, 0012, ք. Երևան, Վաղարշյան 8/1, հեռ. (+374 10) 260-964, ֆաքս: (+374 10) 260-961, ինտերնետային կայք՝ www.gta.am: Կազմակերպության տնօրեն-բաժնետեր է հանդիսանում Գագիկ Գյուլբուդաղյանը:
Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որպես Բանկի 2012-2014թթ. գործունեության աուդիտն իրականացնող աուդիտորական կազմակերպություն է ընտրվել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: 2015թ.-ի և 2016թ.-ի Բանկի գործունեության աուդիտն իրականացնող կազմակերպություն է ընտրվել «Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ-ն: Ընկերության հասցեն ՀՀ, 0001, ք. Երևան, Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27, հեռ. (+374 10) 500-790, ֆաքս: (+374 10) 500-706, ինտերնետային կայք. www.ey.com/am:

Կազմակերպության Գլխավոր տնօրեն է հանդիսանում Հակոբ Սարգսյանը:
Աուդիտի նպատակն է ձեռք բերել բավարար երաշխիքներ՝ համոզվելու համար, որ ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական անճշտություններից:
Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում թողարկողի աուդիտն իրականացրած անձանց կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու, աշխատանքից ազատման դեպքեր չեն եղել:

1.5 Բանկի կառավարման մարմինների կազմի վերաբերյալ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի Տնօրինություն:

«Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի՝ սովորական բաժնետոմսերի (80.94%) և արտոնյալ բաժնետոմսերը (333 հատ), Հայփոստ Թրասթ Մենեջմենթ Բի. Վի. Ընկերություն՝ սովորական բաժնետոմսերի (14.06%), Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ սովորական բաժնետոմսերի (5%) սեփականատեր:

1.5.1 Բանկի խորհուրդը: Բանկի խորհուրդը բաղկացած է յոթ անդամից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Արմեն Տեր-Տաճատյան	Խորհրդի նախագահ
2	Ջուան-Պաբլո Գեչիդջյան	Խորհրդի անդամ
3	Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)	Խորհրդի անդամ
4	Խոսե Լուիս Պերսիկո	Խորհրդի անդամ
5	Դանիել Գիլերմո Սիմոնուտի	Խորհրդի անդամ
6	Խորխե Ալբերտո Դել Ագիլա	Խորհրդի անդամ
7	Խուան Կարլոս Օսկոիդի	Խորհրդի անդամ

1.5.2 Բանկի գործադիր մարմինը: Բանկի գործադիր մարմինը բաղկացած է ութ անդամից.

Հ/հ	Անուն Ազգանուն	Պաշտոն
1	Արթուր Հակոբյան	Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ
2	Դավիթ Ազատյան	Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ
3	Գոհար Հարությունյան	Տնօրինության անդամ
4	Հրանտ Հակոբյան	Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ

5	Վահե Դալյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Տնօրինության անդամ
6	Արթուր Նահապետյան	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն Տնօրինության անդամի ժ/պ
7	Գրիգորի Բաղդասարյան	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն Տնօրինության անդամ
8	Ռուստոմ Բադալյան	Կոնվերս Բանկ ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ

1.6 Բանկի թողարկած արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի կողմից մինչ այժմ թողարկվել և տեղաբաշխվել է 54,722 (Հիսունչորս հազար յոթ հարյուր քսաներկու) հատ սովորական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 300,000 (Երեք հարյուր հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով, և 333 (Երեք հարյուր երեսուներեք) հատ արտոնյալ փոխարկելի բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 (Մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, որոնք էլ ձևավորում են Բանկի կանոնադրական կապիտալը:
Հաշվի առնելով Բանկի կազմակերպաիրավական ձևը՝ Բանկի կողմից թողարկված բաժնետոմսերը չեն շրջանառվում կարգավորող շուկայում: Բանկի բաժնետոմսերը թողարկված են անժամկետ:

1.7 Առաջարկվող պարտատոմսերի հիմնական տվյալները

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Բանկ) թողարկած պարտատոմսերը անվանական, ոչ փաստաթղթային, արժեկտրոնային, միջնաժամկետ պարտատոմսեր են և պետք է տեղաբաշխվեն մեկից ավելի տրանշով:
Թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում և մարվում են՝ ԱՄՆ դոլարով թողարկվածները՝ ԱՄՆ դոլարով, ՀՀ դրամով թողարկվածները՝ ՀՀ դրամով: Ե՛վ ԱՄՆ դոլարով, և՛ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով:

Պարտատոմսի անվանական արժեքը՝	100 (Մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Պարտատոմսերի թողարկման ընդհանուր քանակը՝	100,000 (Մեկ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 10,000 (Տասը հազար) հատ ՀՀ դրամով
Պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը՝	10,000,000 (Տասը միլիոն) ԱՄՆ դոլար, 1,000,000 000 (Մեկ միլիարդ) ՀՀ դրամ
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար

տեղաբաշխման ծավալը՝	
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման քանակը՝	Համապատասխան յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալի և անվանական արժեքի
Պարտատոմսերի արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի համար:
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի շրջանառության ժամկետը՝	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ յուրաքանչյուր տրանշի համար
Արժեկտրոնների վճարման պարբերականությունը՝	Կիսամյակային
Տեղաբաշխման ձևը՝	Չերաշխավորված

Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում Բանկի ինտերնետային կայքում՝ www.conversebank.am տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) օր առաջ:
Պարտատոմսերի դիմաց վճարումները գնորդները պետք է իրականացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը (որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմանների ընդունելը) ոչ ուշ քան մինչև ժամը 16:00-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), թիվ 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է ստորև ներկայացված բանաձևով (էջ 17) հաշվարկված մեկ պարտատոմսի տեղաբաշխման տվյալ օրվա գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով՝ ընդ որում, եթե հայտ-հանձնարարականի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:00 ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:00-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով:
Պարտատոմսերի վերջին տրանշի տեղաբաշխումն ավարտվում է ոչ ուշ, քան ՀՀ ԿԲ կողմից պարտատոմսերի ազդագիրը հաստատելուց հետո մեկ տարվա ընթացքում:
Պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:
Պարտատոմսերով նախատեսված պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ նախատեսված չեն, քանի որ վերջիններս առանց ապահովման են:
Պարտատոմսերի տեղաբաշխման գինը որոշվելու է համաձայն հետևյալ բանաձևի.

$$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ.

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն),
DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,
f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (կիսամյակային վճարումների համար՝ 2),
N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,
C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,
y – մինչև մարում եկամտաբերություն:

Թողարկված պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ծավալը որոշվում է Բանկի Տնօրինության կողմից՝ ելնելով շուկայական պահանջարկից:
Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնը հաշվարկում է կիսամյակային պարբերականությամբ՝ տեղաբաշխման սկզբի օրվան հաջորդող յուրաքանչյուր 6-րդ ամսվա համապատասխան օրը:
Պարտատոմսերի դիմաց վճարվող արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով.

$$AI = FV \times \frac{C}{k} \times \frac{DCS}{DCC}$$

որտեղ.
AI – կուտակված արժեկտրոնային եկամուտն է,
FV- մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,
C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,
k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է, հաճախականությունը (արժեկտրոնների կիսամյակային վճարման դեպքում k=2)

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/Actual, ընդ որում
DCS - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D2M2Y2-D1M1Y1],
DCC –արժեկտրոնային փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում [D3M3Y3-D1M1Y1],
D1M1Y1 – գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/ արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է,
D2M2Y2 – գործարքի կատարման ամսաթիվն է,
D3M3Y3 – գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/ անվանական արժեքի մարման ամսաթիվն է:

Պարտատոմսերի տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի վճարվող արժեկտրոնի տարեկան տոկոսադրույքը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից:

Համաձայն «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի գ կետի Բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, ուստի ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերի ներդրումները Բանկի կողմից թողարկված անվանական պարտատոմսերում ինչպես նաև պարտատոմսերից ստացվող տոկոսները երաշխավորված են նույն չափով և կարգով, ինչպես ավանդները:
Արժեկտրոնի գումարը Բանկը վճարում է պարտատոմսերի սեփականատերերին, արժեկտրոնի հաշվարկման օրը: Եթե արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը: Արժեկտրոնների վճարումը կատարվում է ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով պարատոմսերի արժեկտրոնի հաշվարկման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկմանը նախորդող օրվա ՀՀ ԿԲ հրապարակած միջին շուկայական փոխարժեքը:

1.8 Պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացի համառոտ նկարագիրը

Թողարկողի պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու:
Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից:
Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը (իրավաբանական անձինք համաձայն Հավելված 1-ի և ֆիզիկական անձինք համաձայն Հավելված 2-ի), պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ, կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Պարտատոմս ձեռք բերողը պետք է ունենա որևէ բանկում ԱՄՆ դոլարով (եթե ձեռք բերվող պարտատոմսերի թողարկման արժույթը ԱՄՆ դոլարն է) հաշիվ, ՀՀ դրամով հաշիվ և որևէ Հաշվի օպերատորի մոտ արժեթղթերի հաշիվ:
Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- Պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- Մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելաճ):

Բանկի թողարկած պարտատոմսերից ստացվող եկամուտն ենթակա է հարկման շահութահարկով (իրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար):

1.9 Պարտատոմսերի թողարկման վերջնական պայմանների հրապարակումը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Տնօրինության կողմից՝ տեղաբաշխման յուրաքանչյուր տրանշի համար:
Պարտատոմսերի յուրաքանչյուր տեղաբաշխման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում հրապարակային առաջարկի վերաբերյալ հայտարարության հրապարակումից առնվազն 2 (երկու) օր առաջ:
Թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:

1.10 Պարտատոմսերի ռեեստրի վարումը

Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «Կապիտալ Ինվեստմընթս» փակ բաժնետիրական ընկերությունը (Ներդրումային ծառայությունների մատուցման լիցենզիա՝ ՆԸ 0006, տրված 27.06.2008թ)՝ հասցեն ՀՀ, ք.Երևան, Մ.Խորենացու փողոց 15, Էլիտ Պլազա բիզնես կենտրոն, 2-րդ հարկ, գրասենյակ 6, հեռ (+374 10) 546-431, 547-431, որը գործում է Բանկի հետ կնքված համապատասխան ռեեստրավարման պայմանագրի հիման վրա:

1.11 Ամփոփ ֆինանսական տվյալներ

Ցուցանիշի անվանումը	31/12/16	31/12/15	31/12/14
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո **(Աուդիտ անցած)**	1,565,032	-663,583	2,062,501
Սեփական կապիտալի միջին մեծություն	26,807,180	22,376,240	20,907,341

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	5.84%	-2.97%	9.86%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո **(Աուդիտ անցած)**	1,565,032	-663,583	2,062,501
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	167,144,815	152,182,843	132,670,613
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.94%	-0.44%	1.55%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո **(Աուդիտ անցած)**	1,565,032	-663,583	2,062,501
Գործառնական եկամուտ **(Աուդիտ անցած)**	9,971,725	9,209,400	9,946,000
Զուտ շահույթի մարժա (NPM), %	15.69%	-7.21%	20.74%
Գործառնական եկամուտ **(Աուդիտ անցած)**	9,971,725	9,209,400	9,946,000
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	167,144,815	152,182,843	132,670,613
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	5.97%	6.05%	7.50%
Ընհանուր ակտիվների միջին մեծություն	167,144,815	152,182,843	132,670,613
Սեփական կապիտալի միջին մեծություն	26,807,180	22,376,240	20,907,341
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	6.24	6.80	6.35
Զուտ տոկոսային եկամուտ **(Աուդիտ անցած)**	7,071,898	6,496,275	6,330,190
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	115,653,469	104,378,946	99,078,217
Զուտ տոկոսային մարժա (NIM)	0.06	0.06	0.06
Տոկոսային եկամուտ **(Աուդիտ անցած)**	13,859,656	13,458,001	12,605,148
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	115,653,469	104,378,946	99,078,217
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	0.12	0.13	0.13
Տոկոսային ծախսեր **(Աուդիտ անցած)**	6,787,759	6,961,726	6,274,958
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր **(Աուդիտ անցած)**	156,653,307	136,187,336	122,174,764
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	0.04	0.05	0.05
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	1,565,032	-663,583	2,062,501

(Աուդիտ անցած)			
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	31,074	23,340	19,213
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	50.36	-28.43	107.35
Սպրեդ	0.08	0.08	0.08

Բանկի տարեկան և եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները, և ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 6-ում և Հավելված 7-ում:

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ: ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.2 Ռիսկային գործոններ

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

	31/12/2016թ. Դրությամբ հազար ՀՀ դրամ (աուդիտ անցած)
Անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր	58,061,771
Ոսկու գրավով վարկեր	13,485,219
Կազմակերպությունների երաշխիքներով ապահովված վարկեր	5,895,609
Տրանսպորտային միջոցների գրավադրմամբ վարկեր	1,977,955
Դրամական միջոցներով ապահովված վարկեր	27,221,417
Պաշարների գրավադրմամբ վարկեր	896,863
Սարքավորումների գրավադրմամբ վարկեր	1,485,529
Այլ արժեթղթեր	1,513,789
Այլ գրավներ	5,155,737
Չապահովված վարկեր	7,885,131
(Ընդամենը վարկեր և փոխառություններ համախառն)	**123,579,020**

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա վարկերի տրամադրման ամսաթվի դրությամբ: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն որպես անհատապես արժեզրկված:

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անհատապես արժեզրկված վարկերի գծով գրավների իրական արժեքը կազմում է 8,147,725 հազ. դրամ:

Չարժեզրկված, ոչ ժամկետանց վարկեր և փոխառություններ:

Ստորև աղյուսակում ներկայացված է վարկերի և փոխառությունների որակն ըստ դասերի.

2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հազար ՀՀ դրամ	Ոչ ժամկետանց և չարժեզրկված			Ժամկետանց		Ընդամենը
	Բարձր վարկանիշ	Ստան-դարտ վարկանիշ	Ցածր վարկա-նիշ	բայց ոչ անհատապես արժեզրկված	Անհատա-պես արժեզրկված	
Հաճախորդ-ներին տրված վարկեր և փոխառություն-ներ	27,221,417	88,178,139		1,446,721	6,732,743	123,579,020

3.4 Բիզնեսի նկարագիրը

Վերջին տարիների ընթացքում Բանկի կողմից տեղաբաշխված միջոցների հիմնական բնութագրիչները հետևյալն են՝

Տեղաբաշխման ուղղությունները	31/12/16		31/12/15		31/12/14	
	Ծավալը (հազ. դրամ) (Աուդիտ անցած)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ) (Աուդիտ անցած)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ) (Աուդիտ անցած)	միջին %-ը
Վարկեր՝ այդ թվում	123,579,020	11.74%	86,970,958	13.6%	97,861,313	13.47%
-բիզնեսի վարկավորում	71,198,846	9.45%	36,629,585	11.62%	44,400,324	11.47%
-սպառողական վարկեր	31,088,469	17.59%	27,517,505	18.27%	30,526,700	17.96%
- հիփոթեքային վարկեր	20,706,198	11.15%	20,492,115	12.09%	20,681,879	12.91%
- ավտովարկ.	339,898	15.25%	542,277	15.09%	916,392	15.05%
- այլ	245,609	14.22%	1,789,476	18.7%	1,336,018	20.4%
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում	2,320,882	0%	9,148,697	7.74%	6,916,220	6%
ՀՀ պետական արժեթղթերում	13,273,481	9.24%	3,722,238	8.06%	1,943,118	13.10%

Վերջին տարիների ընթացքում Բանկի կողմից ներգրավված միջոցների հիմնական բնութագրիչները հետևյալն են՝

Ներգրավման ուղղությունները	31/12/16		31/12/15		31/12/14	
	Ծավալը (հազ. դրամ) (Աուդիտ անցած)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ) (Աուդիտ անցած)	միջին %-ը	Ծավալը (հազ. դրամ) (Աուդիտ անցած)	միջին %-ը
Ավանդներ՝ այդ թվում	139,680,217	5.27%	111,430,135	4.25%	96,339,768	5.12%
- ժամկետային ավանդներ	85,227,331	7.20%	60,299,954	7.10%	60,963,834	7.55%
- ցպահանջ ավանդներ	54,452,886	0.78%	51,130,181	0.88%	35,375,934	0.93%
Բանկերից և այլ ֆինանսական հաստատություններից	9,374,272	8.46%	17,326,492	8.94%	17,562,440	8.84%

3.8 Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.8.1 Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը և յուրաքանչյուր մարմնի իրավասություններն ու պարտականությունները

Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 3-ում:
Բանկի կանոնադրությամբ սահմանված են կառավարման հետևյալ մարմինները՝

- Բաժնետերերի ընդհանուր ժողով, այսուհետ նաև Ժողով,
- Բանկի խորհուրդ,
- Գործադիր մարմին. Բանկի Գլխավոր գործադիր տնօրեն և Բանկի Տնօրինություն:

Ժողովը

Ժողովը, բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել տարեկան ժողով, որը հրավիրվում է ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Տարեկան ժողովից բացի անհետաձգելի հարցերի քննարկման համար կարող են գումարվել արտահերթ Ժողովներ:
Ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա/ Կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

բ/ Բանկի վերակազմակերպումը,

գ/ Բանկի լուծարումը,

դ/ ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

ե/ Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և պաշտոնավարման ժամկետի սահմանումը /որը չի կարող մեկ տարուց պակաս լինել/, ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

զ/ հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է/ բանկի կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

ը/ Խորհրդի ներկայացմամբ բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

թ/ բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

ժ/ Ժողովի վարման կարգի հաստատում,

ժա/ հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

ժբ/ բաժնետոմսերի համախմբումը, բաժանումը.

ժգ) Խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը,

ժդ) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

ժե) օրենքով նախատեսված այլ հարցեր:

Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են՝

ա/ Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը.

բ/ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ սահմանված դեպքերում, այսուհետ՝ «Քվեարկող բաժնետոմսեր»:

Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող Քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և Կանոնադրությամբ ձայների այլ քանակ սահմանված չէ:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

ա/ Բանկի հասարակ /սովորական/ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին համապատասխան ձայների քանակով.

բ/ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով.

գ/ Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և Գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ/ Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ.

ե/ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ /եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ժողովի նյութերում/,

զ/ Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Բանկը բաժնետերերի ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

Տարեկան Ժողովի գումարման մասին Բանկի բաժնետերերը ծանուցվում են նշանակված օրվանից առնվազն 10 օր առաջ՝ էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն :

Ժողովի օրակարգը հաստատվում է Խորհրդի կողմից՝ հաշվի առնելով առանձին բաժնետերերի կողմից տրված առաջարկությունները:

Ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությունների արդյունքում, որի արդյունքները արտացոլվում են Ժողովի արձանագրության մեջ՝ Ժողովի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Քվեարկությունը Ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ Խորհրդի անդամների ընտրության և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ժողովի հրավիրման և անցկացման աշխատանքները կազմակերպում է Խորհրդի քարտուղարը /քարտուղարությունը/ կամ Բանկի այլ լիազորված ստորաբաժանում կամ աշխատակից /այսուհետ՝ Խորհրդի քարտուղար/:

Ժողովն իրավասու է, եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50 տոկոսից ավելիին տիրապետող բաժնետերերը /նրանց ներկայացուցիչները/: Քվորումի

բացակայության դեպքում ուղիղ 15 օր հետո հրավիրվում է նոր ժողով: Ժողովի մասնակիցների նոր ցուցակ չի կազմվում: Օրակարգի փոփոխություն չի կատարվում: Ժողովը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում Խորհրդի անդամներից մեկը՝ Խորհրդի անդամների ընտրությամբ /կամ ժողովի մասնակիցների քվեարկությամբ/:

Ժողովների արձանագրությունները կազմում է Խորհրդի քարտուղարը: Ժողովի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և Խորհրդի քարտուղարը:

Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Բաժնետերերի պահանջով նրանց տրվում է արձանագրության պատճեն կամ քաղվածք նրանից:

Բացի տարեկան ժողովից անհետաձգելի հարցերի քննարկման համար գումարվում են նաև արտահերթ ժողովներ: Արտահերթ ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի գործադիր մարմնի, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ /բաժնետերերի/ պահանջով: Բացառությամբ Խորհրդի կողմից սեփական նախաձեռնությամբ արտահերթ ժողովի գումարումից, մնացած դեպքերում արտահերթ ժողովը գումարվում է արտահերթ ժողով գումարելու պահանջ ունեցող անձի կողմից նման պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում: Արտահերթ ժողովի գումարման հետ կապված հարցերը լուծվում են Խորհրդի կողմից՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները: Արտահերթ ժողովները գումարվում են բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկներով: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն՝ ժողովի կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

ա. Բանկի անվանումը,

բ. ժողովի գումարման օրը, ժամը և վայրը,

գ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը,

դ. քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ “կողմ”, “դեմ” և “ձեռնպահ”,

ե. լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու օրը, ժամը և վայրը,

զ. ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ /լիազորված ներկայացուցչի/ կողմից,

է. քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Բաժնետերերի կողմից լրացված և ստորագրված քվեաթերթիկները ուղարկվում են Խորհրդի քարտուղարին՝ ժողովի կայացման օրվանից երեք օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կամ էլ առձեռն:

Խորհրդի քարտուղարը անփոփում է քվեաթերթիկների արդյունքները և քվեարկության արդյունքում կազմում արձանագրություն: Քվեաթերթիկները կցվում են արձանագրությանը և Խորհրդի քարտուղարի կողմից զմռսվում և հանձնվում Բանկի արխիվ՝ պահպանության:

Ժողովների արձանագրությունների հիման վրա Ժողովի որոշումները կարող են կազմվել առանձին որոշումների տեսքով, որոնք համարակալվում են՝ նշելով Ժողովի անցկացման ամսաթիվը: Ժողովի որոշումները ստորագրվում Խորհրդի նախագահի կողմից:

Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Որոշումների բնօրինակները պահպանվում են Խորհրդի քարտուղարի մոտ՝ մինչև սահմանված կարգով դրանք արխիվ հանձնելը:

Ժողովի որոշումներով սահմանված ժամկետների պահպանման նկատմամբ վերահսկողությունը, տարածման և տեղեկացման գործընթացը դրվում է Խորհրդի քարտուղարի կամ այլ լիազորված աշխատակցի վրա:

Ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:

Նման կարգով Ժողովի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը օրենքով և Կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում: Խորհուրդը կազմված է 7 /յոթ/ անդամներից: Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ժողովում, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ Ժողովում՝ ներկա մասնակիցների կողմից: Ընդ որում՝ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում ընդունելու հետ միաժամանակ արտահերթ Ժողովում պետք է որոշում կայացվի Խորհրդի նոր անդամի ընտրության մասին:

Ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

Խորհրդի անդամներն ընտրվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Խորհուրդի իրավասությանն են պատկանում՝

ա/ Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը,

բ/ Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,

գ) Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների, այդ թվում՝ գլխավոր հաշվապահի, Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

ե/ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,

ժ) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը,

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը,

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

ժգ) Բանկի կողմից օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

ժե) Կանոնադրության 9.2.3 կետի «բ», «ժգ» ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը Ժողովի քննարկմանը.

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

ժի) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

իա) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.

իբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը.

իգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը.

իդ/ գույքի շուկայական արժեքի որոշումը,

իե) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը

իզ) Որոշում է կայացնում Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի բացակայության ժամանակ նրան փոխարինողի վերաբերյալ:

Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Խորհուրդը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 և ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:

Խորհրդի նիստերի քվորումը համարվում է ապահովված, եթե Խորհրդի նիստերին մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 2/3–ը: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Գլխավոր գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Գլխավոր գործադիր տնօրենը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

Խորհրդի նիստերը նախագահում է Խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ Խորհրդի անդամներից մեկը՝ խորհրդի անդամների ընտրությամբ:

Խորհրդի նախագահը հերթականությանբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին:

Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Խորհրդի անդամների կողմից առաջադրվող հարցերին:

Զեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Խորհրդի նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Խորհրդի կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

Խորհրդի քվեարկության արդյունքները հաշվում և անփոփում է Խորհրդի քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Խորհրդի նիստում:

Խորհրդի նիստերը արձանագրվում են Խորհրդի քարտուղարի կողմից: Խորհրդի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 10 օրվա ընթացքում՝ որոնք ստորագրում են Խորհրդի նախագահը, անդամները և քարտուղարը: Խորհրդի

նիստերի արձանագրությունները ներկայացվում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը ստորագրման պահից առավելագույնը 10 օրվա ընթացքում:
Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով, որոնք գումարվում են Կանոնադրությամբ հեռակա կարգով Ժողովների գումարման համար սահմանված կարգով:
Խորհրդի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ Խորհրդի անդամները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում:
Նման կարգով Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:
Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ:
Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:
Խորհուրդը պատասխանատու է բանկի բնականոն և արդյունավետ գործունեության, Բանկի ակտիվների պահպանության, Բանկի բաժնետերերին, Կենտրոնական բանկին և հասարակությանը ճշգրիտ ու արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու, ինչպես նաև Բանկի գործադիր մարմնի վերահսկման համար:
Խորհուրդը, ինչպես նաև գործադիր մարմինը, պատասխանատու են Բանկում էթիկայի նորմերի, ինչպես նաև մասնագիտական վարքագծի կանոնների ձևավորման և ներդրման համար:
Բանկի Խորհրդի նախագահի լիազորությունները սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով և Խորհրդի աշխատակարգով:

Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է միանձնյա գործադիր մարմնի՝ Գլխավոր գործադիր տնօրենի և Բանկի Տնօրինության (այսուհետ՝ Տնօրինություն) կողմից: Գլխավոր գործադիր տնօրենը հանդիսանում է Տնօրինության նախագահը: Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության իրավասությանն են պատկանում Բանկի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Կանոնադրությամբ Ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերի:

Գլխավոր գործադիր տնօրենի և Տնօրինության անդամների նշանակումը , ինչպես նաև նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Խորհրդի որոշմամբ: Տնօրինության անդամները նշանակվում են և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Գլխավոր Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

Տնօրինությունը գործում է ՀՀ օրենքների, Կանոնադրության, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված Բանկի ներքին իրավական ակտերի հիման վրա, որոնք առավել մանրամասն սահմանում են Տնօրինության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

Տնօրինության նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Գլխավոր գործադիր տնօրենի կամ Տնօրինության առնվազն 2 (երկու) անդամների նախաձեռնությամբ:
Տնօրինությունն իրավասու է, եթե նիստին ներկա են Տնօրինության անդամների առնվազն 1/2-ը: Որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Հավասար ձայների դեպքում Տնօրինության նախագահի ձայնը որոշիչ է:
Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ նորմատիվ իրավական ակտերով և/կամ Բանկի ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Տնօրինության անդամների հետ աշխատանքային պայմանագրերը Բանկի անունից ստորագրում է Խորհրդի նախագահը կամ Խորհրդի կողմից լիազորված այլ անձ:
Գլխավոր գործադիր տնօրենը և Տնօրինության անդամներն այլ կազմակերպություններում կարող են վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Խորհրդի համաձայնությամբ:
Տնօրինության իրավասությանն են պատկանում.

ա/ Բանկի կողմից կիրառվող սակագների և դրույքների սահմանումը,

բ/ Բանկի խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների և այլ իրավական ակտերի հիման վրա կազմված Բանկի ընթացակարգերի և կարգերի հաստատումը,

գ/ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց միջնորդավճարների սահմանումը,

դ/ ծառայությունների և բանկային գործիքների պայմանների հաստատումը,

ե/ Բանկի ակտիվների և պասիվների կառավարումը,

զ/ Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,

է/ ներքին կարգապահության կանոնների հաստատում,

ը/ աշխատանքի նկարագրերի (պաշտոնեական հրահանգների) հաստատում,

թ/ Բանկի հրապարակային պայմանագրերի տիպային ձևերի հաստատումը,

ժ/ Բանկի ընթացիկ գործունեության հետ կապված այլ՝ Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանը չվերապահված հարցերի լուծումը:

Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գլխավոր գործադիր տնօրենը, որն ի պաշտոնե հանդիսանում է Տնօրինության նախագահը: Վերջինիս բացակայության դեպքում Տնօրինության նիստերը կազմակերպում և վարում է Գլխավոր գործադիր տնօրենի փոխարինողը, որը հանդիսանում է Տնօրինության անդամ:
Տնօրինության նախագահը հերթականությանբ ներկայացնում է օրակարգում ընդգրկված հարցերը և հրավիրում յուրաքանչյուր հարցի մասով համապատասխան զեկուցողին: Հարցի վերաբերյալ զեկուցումը լսելուց հետո, անհրաժեշտության դեպքում, զեկուցողը տալիս է պարզաբանումներ Տնօրինության անդամների կողմից առաջադրվող հարցերին: Զեկուցվող հարցի վերաբերյալ քննարկումներն ավարտելուց հետո Տնօրինության նախագահը, քննարկվող հարցի վերաբերյալ Տնօրինության կողմից որոշում կայացնելու համար քննարկման արդյունքում ձևակերպված առաջարկություն/ներ/ը դնում է քվեարկության:

Տնօրինության քվեարկության արդյունքները հաշվում և ամփոփում է Տնօրինության քարտուղարը: Քվեարկության արդյունքները հայտարարվում են տվյալ Տնօրինության նիստում:

Տնօրինության նիստերը արձանագրվում են քարտուղարի կողմից: Տնօրինության նիստի արձանագրությունը կազմվում է դրա ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առնվազն 1 օրինակով, որը ստորագրում են Տնօրինության նախագահը, անդամները և քարտուղարը:

Տնօրինության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Խորհրդին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ վերջիններիս պահանջով, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանմանը՝ ստորագրման պահից առնվազն 10 օրվա ընթացքում:

Գլխավոր գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Գլխավոր գործադիր տնօրենը՝

ա/ տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Բանկի անունից, այդ թվում՝ տրամադրում է բանկային երաշխիքներ,

բ/ ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս,

գ/ տալիս է լիազորագրեր,

դ/ գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,

ե/ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր,

զ/ Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները, Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների, Բանկի գլխավոր հաշվապահի, Տնօրենների թեկնածությունները, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,ինչպես նաև Տնօրինության կողմից հավանության արժանացած ներքին իրավական ակտերը, բացառությամբ այն ներքին իրավական ակտերի, որոնց հաստատման իրավասությունը վերապահված է Տնօրինությանը,

է/ հաստատում է Բանկի աշխատատեղերը,

ը/ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, սահմանում է աշխատակիցների պարտականությունները, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ, և վերահսկում է դրանց կատարումը,

թ/ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և ազատում Բանկի աշխատակիցներին և կնքում աշխատանքային պայմանագրեր, բացառությամբ Ժողովի և Խորհրդի կողմից նշանակվող անձանցից,

ժ/ Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

ժա/ ստեղծում է մշտական և/կամ/ ընթացիկ աշխատանքային հանձնաժողովներ,

ժբ/ կազմում, ստորագրում և պետական լիազորված մարմին է ներկայացնում ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաշվետվություններ, այդ թվում՝ ֆինանսական հաշվետվություններ,

ժգ/ ստորագրում է Տնօրինության նիստերի արձանագրություններն ու որոշումները,

ժդ/ Բանկի անունից բացում է բանկային հաշիվներ,

ժե/ պարտավոր է Բանկի հիմնադիրների /բաժնետերերի/ պահանջով հատուցել իր կողմից Բանկին պատճառված վնասները, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ իր հետ կնքված աշխատանքային պայմանագրով,

ժզ/ գործում է ՀՀ իրավական ակտերի և Կանոնադրության հիման վրա.

ժէ/ իրավունք ունի առանց Ժողովի և/կամ/ Խորհրդի նախնական համաձայնության գործարքներ կնքել Բանկի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 տոկոսը,

ժը/ կազմակերպում է Ժողովի, Խորհրդի և Տնօրինության կողմից ընդունված որոշումների կատարումը, հաշվետու է Ժողովին, Խորհրդին ու Տնօրինության և իրավունք չունի Ժողովի, Խորհրդի անդամների համար պարտադիր որոշումներ կայացնելու,

ժթ/ իրականացնում է օրենքով կամ Կանոնադրությամբ Ժողովի, Խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ

ի/ կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ, որոնց իրավասությունները սահմանվում են Բանկի ներքին իրավական ակտերով,

իա/ արձակում է հրաման իր բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում իր պարտականությունները Բանկի Խորհրդի կողմից նշանակված տեղակալներից/ Տնօրինության անդամներից մեկի վրա դնելու մասին,

իբ/ որոշում է Բանկի պայմանագրերով հատուկ պայմաններ կիրառելու մասին,

իգ/ մինչև լուծարման հանձնաժողովի ձևավորումն իրականացնում է լուծարման հանձնաժողովի լիազորությունները,

իդ/ հաստատում է Բանկի կառավարման այլ մարմինների իրավասությանը չվերապահված ներքին իրավական ակտերը,

իե/ իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավասություններ:

Ներքին վերահսկողության նվազագույն պայմաններից ելնելով՝ Գլխավոր գործադիր տնօրենը, բացի վերը նշված իրավասություններից, իրականացնում է նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ներքին հսկողության նվազագույն պայմաններով նախատեսված իրավասություններ:

Տնօրինության կազմում ընդգրկվում են Գլխավոր գործադիր տնօրենը, նրա տեղակալները, գլխավոր հաշվապահը, Բանկի Տնօրենները:

Արթուր Հակոբյան,
Գլխավոր գործադիր տնօրեն, Տնօրինության նախագահ

Ծնվել է 1969 թվականի հունիսի 24-ին ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում: 1987-1989թթ. զինվորական ծառայություն է անցել ԽՍՀՄ զինված ուժերում:

1990-1995թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, ստացել տնտեսագետ-մաթեմատիկոսի որակավորում: 1996թ.-ի հունիսից մինչև 2000թ.-ի հունվար ամիսը աշխատել է ՀՀ ֆինանսների, ինչպես նաև վերակազմավորված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություններում: Աշխատանքային գործունեությունը սկսել է նախարարության Դրամավարկային քաղաքականության վարչությունում, աշխատել է առաջատար մասնագետի, այնուհետ նույն վարչության վարչության պետի տեղակալ - բաժնի պետի

պաշտոններում: Հետագայում, 1998թ. նշանակվել է նախարարության Պետական մասնակցության կառավարման վարչության պետի, հետագայում՝ Ֆինանսական ծրագրերի գլխավոր վարչությունում՝ վարչության պետի պաշտոնում: 2000-2014թթ. աշխատանքային գործունեություն է ծավալել ՀՀ բանկային համակարգում: 2000թ.-ի հունվարից մինչև 2002թ.-ի մայիսը հանդիսացել է «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալը, հետագայում՝ մինչև 2006թ.-ի օգոստոսը աշխատել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալի պաշտոնում: 2006թ.-ի հոկտեմբերից աշխատել է «Արարատբանկ» ԲԲԸ-Ի գործադիր տնօրեն-վարչության նախագահի տեղակալի, 2009-ից մինչև 2012թ.՝ նույն բանկի գործադիր տնօրեն-վարչության նախագահի առաջին տեղակալի պաշտոններում: 2012-2014թթ. ապրիլ ամիսը հանդիսացել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի, վարչության նախագահի առաջին տեղակալը: 2014-2016թթ. «Դիլիջան Ինտերնեշնլ Սքուլ Պրոփերթիզ» և «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամների գործադիր տնօրենն է և Հայաստանի զարգացման նախաձեռնություններ հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագրի ղեկավարը: 2014-2016թթ. սովորել է Մոսկվայի «Սկոլկովո» կառավարման դպրոցում, ստացել Գործարար կառավարման մագիստրոսի (Executive MBA) որակավորում:
Ամուսնացած է, ունի երկու որդի դուստր և մեկ:

Դավիթ Ազատյան
Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ,
Տնօրինության անդամ

Ծնվել է 1981թ. հունվարի 1-ին: 1997-2001թթ սովորել է Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 2003թ-ից՝ «ԱրդշինԲանկ» ԲԲԸ վարկային և ներդրումային քաղաքականության վարչության վարկային գործառնությունների բաժնում՝ որպես մասնագետ: Այնուհետև, 2003-2005թթ-ին աշխատել է «Հայխնայբանկ» ՓԲԸ-ի ներքին աուդիտի վարչությունում՝ որպես մասնագետ, ապա՝ գլխավոր մասնագետ:
2005-2011թթ-ին աշխատել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ Վերահսկողության վարչության մասնաճյուղերի վերահսկողության բաժնի առաջատար վերահսկողի, ապա Ներքին աուդիտի վարչության տեսչական վերահսկողության բաժնում առաջատար աուդիտորի, իսկ 10.10.2006թ-ից՝ գլխավոր աուդիտորի պաշտոնը:
17.01.2011թ-ից նշանակվել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ում որպես Ներքին աուդիտի վարչության պետ, ապա՝ 19.07.2011թ.-ից որպես Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ և «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ վարչության անդամ: 03.07.2017թ.-21.08.2017թ. աշխատել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ֆինանսական տնօրեն-գլխավոր հաշվապահ:
2008-2013թթ.-ին հանդիսացել է «Սիլ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ Խորհրդի անդամ:
2017թ.–ի օգոստոսի 21-ից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցնում է Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահի պաշտոնը՝

հանդիսանալով Բանկի Տնօրինության անդամ:
Տիրապետում է անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներին:
Ամուսնացած է, ունի 2 երեխա

Գոհար Հարությունյան,
Տնօրնության անդամ
Ծնվել է 1971թ. փետրվարի 9-ին: 1991 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Ֆինանսահաշվային ֆակուլտետը: 2006թ.-ից ուսանում է Էյ-Սի-Սի-Էյ հաստատությունում (Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա):
1992-1999թթ. աշխատել է «Արդշինբանկ» ԲԲԸ՝ Հաշվապահական հաշվառման վարչությունում, 1999թ. նշանակվել է նույն բանկի Մաշտոցի մասնաճյուղի գլխավոր հաշվապահ: 2003-2004թթ. զբաղեցրել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Հաճախորդների սպասարկման վարչության Հաշվեգործառնական բաժնի պետի պաշտոնը: 2004-2005թթ. աշխատել է «ՎՏԲ-Արմենիա» ՓԲԸ Հաճախորդների սպասարկման բաժնի պետ, այնուհետև նշանակվել նույն բանկի Ռիսկերի վերլուծության և պլանավորման վարչության պետի տեղակալ-Բյուջետային պլանավորման բաժնի պետ: 2005թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2007թ. օգոստոսի 1-ն աշխատել է «Կասկադ-Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում որպես գլխավոր հաշվապահ, իսկ 2007թ. օգոստոսի 1-ից տեղափոխվել է նույն Խմբի անդամ «Կասկադ Բանկ» ՓԲԸ՝ որպես գլխավոր հաշվապահ: 2010թ. հունիսից «Կասկադ Բանկ» ՓԲԸ և «Ամերիաբանկ» ՓԲԸ միացման պայմանագրի համաձայն տեղափոխվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ, ուր 2010թ. հոկտեմբերի 8-ից նշանակվել է Ֆինանսական դեպարտամենտի գլխավոր հաշվապահի տեղակալ:
2011թ. հուլիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում որպես Հաշվետվությունների ու վերլուծությունների բաժնի պետ: 2011 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 2016թ. հուլիսի 31-ը ներառյալ ստանձնել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Գլխավոր հաշվապահի պաշտոնը: 2016թ. օգոստոսի 1-ից «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի առաջին տեղակալի ժ/պ (սույն Ծրագրային ազդագրի կազմման պահի դրությամբ ներկայացված է ՀՀ ԿԲ գրանցման): Գոհար Հարությունյանը «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Վարչության անդամ է:

Հրանտ Հակոբյան
Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ
Ծնվել է 1980թ. ապրիլի 15-ին Երևանում՝ Հայաստան: Ունի Բուենոս Այրեսի համալսարանի տնտեսագիտության բակալավրի և Կոլումբիայի (ԱՄՆ) համալսարանի Գործարար կառավարման մագիստրոսի (MBA) որակավորում: Տիրապետում է իսպաներեն, անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներին:
Մինչ Հայաստան տեղափոխվելը զբաղեցրել է տարբեր պատասխանատու պաշտոններ Corporación América կազմակերպությունում՝ մասնակցություն է ունեցել ֆինանսական, բիզնեսի զարգացմանը, միաձուլման և ձեռքբերման գործընթացին ուղղված ծրագրերին, նախագծերին: ՀՀ-ում աշխատանքային գործունեությունը

սկսել է 2008թ-ից. 2008-2011թթ. «Հայփոստ Տրաստ Մենեջմենթ Բի. Վի.» Ընկերությունում՝ զբաղվելով «Հայփոստ» ՓԲԸ-ում Կորպորատիվ զարգացման գործառույթներով և մինչ այժմ հանդիսանում է «Հայփոստ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ: 2011-2017թթ. զբաղեցրել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի խորհրդականի պաշտոնը:
2017թ.փետրվարից հանդիսանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի Ֆինանսական տնօրեն:

Վահե Դալյան
Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Տնօրինության անդամ
Ծնվել է 1969թ. դեկտեմբերի 21-ին: 1992թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Ռադիոտեխնիկա ֆակուլտետը ստանալով Ռադիոինժեների որակավորում: Այնուհետև՝ 1994թ. ավարտել է Հայկազյան համալսարանի Բիզնես դպրոցը՝ ստանալով Գործավար կառավարման մագիստրոսի (MBA) որակավորում, իսկ 2002թ. ավարտել է Լոնդոնի բիզնես դպրոցը ստանալով Ֆինանսների մագիստրոսի (MIF) որակավորում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 1995թ.-ից ստանձնելով «Ջինիշյան հիշատակի հիմնադրամ»-ի վարկային ծրագրի տնօրենի պաշտոնը (1995-1998թթ.): 1999-2001թթ. աշխատել է ԱՄՆ ՄԶԳ/Շորբանկ խորհրդատվական ծառայություններ ծրագրում որպես միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկային ծրագրի պատասխանատու: 2003-2006թթ. եղել է ԱՄՆ ՄԶԳ Փոքր ձեռնարկությունների զարգացման նախաձեռնության միկրովարկավորման կազմակերպությունների զարգացման մասնագետ: 2006-2008թթ. աշխատել է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրում՝ նախ որպես միկրովարկավորման մասնագետ, այնուհետև որպես խմբի ղեկավար:
2009թ.-ից առ այսօր Վահե Դալյանն աշխատում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում: Զբաղեցրել է Ներդրումների զարգացման և ֆինանսական գործիքների բաժնի պետի, ռիսկերի կառավարման բաժնի պետի, ռիսկերի կառավարման վարչության պետի պաշտոնները: 2013-2017թթ. ստանձնել է Բանկի Գործադիր տնօրենի տեղակալի և Առևտրային ֆինանսավորման վարչության պետի պաշտոնները:
2017թ. փետրվարից հանդիսանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման գծով տնօրեն:
Վահե Դալյանը 2011թ.-ից Բանկի Վարչության անդամ է:

Արթուր Նահապետյան
Բիզնեսի զարգացման գծով տնօրեն, Տնօրինության անդամի ժ/պ

Ծնվել է 1981թ. սեպտեմբերի 25-ին: 1998-2003թթ սովորել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 2003թ-ից՝ <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ-ից, Ռազմավարության և մեթոդոլոգիայի վարչությունում՝ որպես մասնագետ: Այնուհետև, նույն վարչությունում նշանակվել է գլխավոր մասնագետ, ապա՝ առաջատար մասնագետ:
2005թ-ին աշխատել է <<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ-ում՝ զբաղեցնելով Տեղեկատվավերլուծական վարչության գլխավոր մասնագետի պաշտոնը:

17.08.2006թ ընդունվել է աշխատանքի <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ-ում՝ մասնաճյուղերի կառավարման վարչության պետի տեղակալի պաշտոնում:
20.08.2007թ-ին զբաղեցրել է <<Յունիբանկ>> ՓԲԸ–ում ներքին աուդիտի գործառնական աուդիտի վարչության ակտիվապասիվային գործարքների աուդիտի բաժնի վերահսկիչի պաշտոնը, այնուհետև նշանակվել է բաժնի պետի հաստիքում:
23.01.2008թ-ից նշանակվել է մեթոդոլոգիայի և ստանդարտացման դեպարտամենտի տնօրեն, ապա՝ 02.06.2008թ.-ին նշանակվել է բանկի իրավաբանական դեպարտամենտի մեթոդոլոգիայի և ստանդարտացման վարչության պետ:
26.01.2009թ.-ին ընդունվել է աշխատանքի Արմենիան Փոստբանկ ՓԲԸ՝ որպես դասընթացավարների խմբի ղեկավար, ապա նշանակվել է որպես Գործադիր փոխտնօրեն:
17.10.2009թ.-ից <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ Անձնակազմի կառավարման բաժնում ընդունվել է որպես դասընթացավար, այնուհետև նույն վարչությունում՝ որպես կարիերայի զարգացման պատասխանատու: 01.06.2010թ նշանակվել է Փոստբանկային ծառայությունների ղեկավար, իսկ 22.10.2012թ-ին՝ որպես Մեթոդոլոգիայի բաժնի պետ:
01.02.2017թ-ին նշանակվել է որպես Բիզնեսի զարգացման գծով տնօրենի տեղակալ-Ռազմավարության, պլանավորման և վերլուծությունների վարչության պետ:
01.09.2017թ-ից զբաղեցնում է Բիզնեսի զարգացման գծով տնօրեն-Տնօրինության անդամի ժ/պ պաշտոնը:
Տիրապետում է անգլերեն, ռուսերեն և հայերեն լեզուներին:
Ամուսնացած է, ունի 2 դուստր:

Գրիգորի Բաղդասարյան
Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն Տնօրինության անդամ
Ծնվել է 1976թ. նոյեմբերի 26-ին: 1992-1997թթ. սովորել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում ստանալով ինժեներ-տնտեսագետի որակավորում:
Աշխատանքային գործունեությունը սկսել է 1999-2001թթ.՝ Սևանի Սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում՝ որպես 2-րդ կարգի տեսուչ:
2004-2007թթ. աշխատել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի Սևանի մասնաճյուղում՝ որպես վարկային մասնագետ:
2007թ.-ի հոկտեմբերից մինչև 2009թ.-ի մայիս աշխատել է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Սևան» մասնաճյուղում՝ որպես վարկային մասնագետ:
2009-2011թթ. հանդիսացել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Սևան մասնաճյուղի կառավարիչ,
2011-2012թթ.՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Մանրածախ դեպարտամենտ, Բիզնեսի զարգացման գծով Տարածքային տնօրեն:
2012-2016թթ. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում զբաղեցրել է տարածաշրջանային ղեկավարի պաշտոնը:
2017թ.-ի փետրվարից նշանակվել է Մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ-ՄՑՎ վարչության պետ:
Ամուսնացած է, ունի 2 երեխա:

Ռոստոմ Բադալյան
Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Տնօրինության անդամ
Ծնվել է 1983թ. փետրվարի 11-ին: 1999-2004թթ. սովորել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում:
2007-2013թթ-ին «Արարատբանկ» ՓԲԸ-ում զբաղեցրել է տարբեր պաշտոններ՝ որպես վարկային մասնագետ, միկրովարկավորման խմբի ղեկավար, վարկավորման բաժնի պետի տեղակալ/կորպորատիվ հաճախորդների վարկավորման բաժնի ղեկավար, վարկավորման բաժնի պետ:
2014թ.-ի մարտից մինչև մայիս աշխատել է «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում՝ որպես կորպորատիվ հաճախորդների հետ աշխատանքի վարչության միջին հաճախորդների հետ աշխատանքի բաժնի պետ:
2014-2016թթ. աշխատել է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային դեպարտամենտի սեփական ռեսուրսներով վարկավորման վարչության պետ:
2016թ.-ի ապրիլ ամսից մինչև 2017թ.-ի փետրվար աշխատել է «Իզի Փեյ» ՍՊԸ-ում՝ որպես տնօրեն:
2017թ.-ի փետրվարի 06-ից զբաղեցնում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կորպորատիվ բիզնեսի գծով տնօրենի պաշտոնը:
Ամուսնացած է, ունի դուստր:

Ներքին աուդիտի ստորաբաժանում

Ներքին աուդիտի ստորաբաժանման /այսուհետ՝ ներքին աուդիտ/ ղեկավարը և անդամները նշանակվում են Խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև Գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:
Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:
Ներքին աուդիտը Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Բանկի ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Գլխավոր գործադիր տնօրենի, Տնօրինության, Բանկի տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Բանկի ներքին ակտերի, Գլխավոր գործադիր տնօրենին, Տնօրինության տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրած հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
Ներքին աուդիտի ղեկավարը Խորհրդին, Տնօրինության և Գլխավոր գործադիր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են Գլխավոր

գործադիր տնօրենի, Տնօրինության կամ Խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես Խորհրդի նախագահին:
Սույն մասով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:
Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել բանկի Խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

3.8.2 Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ

Անուն ազգանուն	Պաշտոնը	Բնակության վայրը (հասցեն)	Մասնագի-տությունը	վերջին 3 տարիներում զբաղեցրած պաշտոնները այդ թվում համատեղու-թյամբ
Արմեն Տեր-Տաճատյան	Խորհրդի նախագահ	ք.Երևան, Չեխովի փ, շենք 10, բն.120	Իրավաբան	«Տեր-Տաճատյան իրավաբանական և բիզնես-խորհրդատվական» ՓԲԸ. Հիմնադիր տնօրեն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ
Ջուան Պաբլո Գեչիդջյան	Խորհրդի անդամ	Վահագնի թաղ. Արաքս 23	Մենեջեր	«Հայփոստ» ՓԲԸ դիտորդ խորհրդի նախագահ, «ԸդվանսդԳլոբալ Ինվեսթմենթս» ԷլԷլՍի-ի տնօրեն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ, Արմենիա միջազգային օդանավակայանների տնօրեն
Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)	Խորհրդի անդամ	Ձվարթնոց շ. 15, բն. 18	Հոգևորական	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հաշվապահ, Քահանա, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Խոսե Լուիս Պերսիկո	Խորհրդի անդամ	Բուենոս Այրես, Ռոյ Դիաս դե Գուզման 257փ., 4/բ շ./	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ «Կորպորասիոն Ամերիկա» ՍԱ-ում որպես «Բոդեգաս դել Ֆին դել Մունդո» ՍԱ-ի գլխավոր ֆինանսական տնօրեն

Դանիել Գիլերմո Սիմոնուտտի	Խորհրդի անդամ	Բուենոս Այրես, Հոնդուրասի փ., 5663-GA1	Հաշվապահ	Ամերիկյան միջազգային օդանավակայանների (ԱՄՕ)՝ Զվարթնոց միջազգային օդանավակայան (Երևան, Հայաստանի Հանրապետություն) և Կարասկո միջազգային օդանավակայան (Մոնտեվիդեո, Ուրուգվայի Հանրապետություն) կոնցեսիոներ կազմակերպությունների գործունեությունը վերահսկող կորպորացիայի գլխավոր ֆինանսական տնօրեն. «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Խորխե Ալբերտո Դել Ագիլա	Խորհրդի անդամ	Արգենտինա, Բուենոս Այրես, Լաս Կամպանիլաս 602	Տնտեսագետ-քաղաքագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Խուան Կարլոս Օսկոիդի	Խորհրդի անդամ	ք. Բուենոս Այրես, Ալբարինո 1064	Մենեջեր-Տնտեսագետ	«Afluenta» S.A.-ի տնօրեն, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կոմերցիոն և Այլ Քաղաքականությունների Զարգացման և Վերահսկողության հանձնաժողովի նախագահ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ
Արթուր Հակոբյան	Գլխավոր գործադիր Տնօրեն, Տնօրինության նախագահ	Ք. Երևան Նոր–Նորքի 2-րդ զանգված Թոթովենցի շ. 2, բն 10	Տնտեսագետ-մաթեմատիկոս	«Դիլիջան Ինտերնեշնլ Սքուլ Պրոփերթիզ» և «Դիլիջան Դեվելոփմենթ» հիմնադրամների գործադիր տնօրեն, «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի Դիլիջանի զարգացման ծրագրի ղեկավար

Դավիթ Ազատյան	Հաշվապահական հաշվառման վարչության պետ, Գլխավոր հաշվապահ, Տնօրինության անդամ	Ք. Աշտարակ, Ուջան 3 փ, տուն 11	Ճարտարագետ	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-գլխավոր հաշվապահ, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ ֆինանսական տնօրեն-գլխավոր հաշվապահ:
Գոհար Հարությունյան	Տնօրինության անդամ	Ք. Երևան. Հանրապետության փ. 46շ.բն.16 Պուշկինի 1, բն.7	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Հաշվապահական հաշվառման վարչության պետ-Գլխավոր հաշվապահ
Հրանտ Հակոբյան	Ֆինանսական տնօրեն, Տնօրինության անդամ	Ք. Երևան Այգեստան 9փ., տուն 45	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի խորհրդական
Վահե Դալյան	Ռիսկերի կառավար-ման գծով տնօրեն, Տնօրինության անդամ	Ք. Երևան. Սոսե 2 նրբ, 8/16	Ռադիոինժեներ, ֆինանսիստ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Գործադիր տնօրենի տեղակալ-Առևտրային ֆինանսավորման վարչության պետ
Արթուր Նահապետյան	Բիզնեսի զարգացման գծով տնօրեն Տնօրինության անդամի ժ/պ	Ք. Երևան, Նոր -Նորքի 9 զ, 81շ, 31 բն	Տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մեթոդոլոգիայի բաժնի պետ, «Կոնվերս Բանկ» ՓԲԸ Բիզնեսի զարգացման գծով տնօրենի տեղակալ-Ռազմավարության, պլանավորման և վերլուծությունների վարչության պետ
Գրիգորի Բաղդասարյան	Մանրածախ բիզնեսի գծով տնօրեն Տնօրինության անդամ	Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, 5-րդ միկրոշրջան, 7շ., բն7	Ինժեներ-տնտեսագետ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Տարածաշրջանային ղեկավար
Ռուստոմ Բադալյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն-Տնօրինության անդամ	Ք. Երևան. Նուբարաշեն 11, 10շ., բն.28	Տնտեսագետ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում՝ որպես վարկային դեպարտամենտի սեփական ռեսուրսներով վարկավորման վարչության պետ, «Իզի Փեյ» ՍՊԸ տնօրեն

Լիլիթ Յորդանյան	Ներքին աուդիտի ղեկավար	Ք. Երևան. Ամիրյան 4/6, բն.107	Տնտեսագետ	Ներքին աուդիտի ղեկավար

3.10 Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսի վերաբերյալ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի բոլոր տարիներ ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին համապատասխան:

Բանկի աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև անկախ աուդիտորական եզրակացությունները ներկայացված են սույն Ծրագրային ազդագրի Հավելված 7-ում:

Նախորդ տարիների «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի գործունեության ֆինանսական արդյունքները և ակտիվների տարեկան եկամտաբերությունը ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

հազար ՀՀ դրամ

ԱՆՎԱՆՈՒՄԸ	31/12/16 (Աուդիտ անցած)	31/12/15 (Աուդիտ անցած)	31/12/14 (Աուդիտ անցած)
ԱԿՏԻՎՆԵՐ	190,993,270	158,903,165	146,847,360
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	158,815,267	138,201,740	124,343,077
ԿԱՊԻՏԱԼ	32,178,003	20,701,425	22,504,283
Զուտ տոկոսային եկամուտ	7,071,897	6,496,275	6,330,190
Գործառնական եկամուտ (զուտ կոմիսիոն վճարները ներառյալ)	9,971,725	9,209,400	9,946,000
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ	1,508,590	-616,073	2,368,195
Շահույթ (վնաս) հարկումից հետո	1,565,032	-663,583	2,062,501
Ակտիվների շահութաբերության գործակիցը (ROA, %)	0.94%	-0.44%	1.55%
Սեփական կապիտալի շահութաբերության գործակիցը (ROE, %)	5.84%	-2.97%	9.86%

Բանկի ֆինանսական գործունեությունը

ա. Բանկի պարտավորությունները (ռեսուրսները) ունեն հետևյալ կառուցվածքը.

Ֆինանսական միջնորդություն կատարող անձանց, այդ թվում՝ բանկերի, բնականոն գործունեության համար ռեսուրսների գլխավոր աղբյուրներն են հանդիսանում սեփական կապիտալը և ներգրավված միջոցները: Բանկը վարկերի տրամադրման և միջոցների այլ տեղաբաշխումների նպատակով վերջին տարիներին զգալիորեն ամրապնդել է իր ռեսուրսային բազան:

	31/12/16 (Աուդիտ անցած)	Տես. կշիռ %	31/12/15 (Աուդիտ անցած)	Տես. կշիռ %	31/12/14 (Աուդիտ անցած)	Տես. կշիռ %
Ռեսուրսներ, ընդամենը, այդ թվում՝	190,993,270	100	158,903,165	100	146,847,360	100
Սեփական կապիտալ	32,178,003	16.85	20,701,425	13.03	22,504,283	15.32
Պարտավորություններ, որից՝	158,815,267	83.15	138,201,740	86.97	124,343,077	84.68
հաճախորդներից ներգրավված միջոցներ	139,680,217	73.13	111,430,135	70.12	96,339,768	65.61
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	9,374,272	4.91	17,326,492	10.90	17,562,440	11.96
այլ պարտավորություններ	841,484	0.44	755,678	0.48	502,851	0.34

բ. Բանկի սեփական կապիտալի կառուցվածքը 2014-2016թթ. ընթացքում ունի հետևյալ տեսքը.

Կապիտալ	31/12/16 (Աուդիտ անցած)	31/12/15 (Աուդիտ անցած)	31/12/14 (Աուդիտ անցած)
Կանոնադրական կապիտալ	16,416,633	7,002,033	7,002,033
Էմիսիոն եկամուտ	63,233	63,233	63,233
Պահուստներ՝	5,724,323	4,659,858	5,170,777
Գլխավոր պահուստ	1,005,996	1,005,996	844,898
Վերագնահատման պահուստներ	4,718,327	3,653,862	4,325,879
Կուտակված շահույթ (վնաս)	9,973,814	8,976,301	10,268,240
Ընդամենը կապիտալ	32,178,003	20,701,425	22,504,283

ՆԵՐԴՐՈՂԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3 Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը



ՀԱՎԵԼՎԱԾ 4 Թողարկման վերջնական պայմաններ

………………… 2017թ.

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
(Թողարկողի անվանումը)

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս
(արժեթղթերի տեսակը)

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ------- -------------------- 2017թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ում՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում:

1. Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.1	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
1.2	Երաշխավորողը	Նախատեսված չէ ներգրավել երաշխավոր
1.3	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը, օրինակ 2016 թ-ի 1-ին թողարկման համար՝ 2016-1)	
1.4	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	

1.5	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի միևնույն հերթի պարտատերերի/ սեփականատերերի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի գ ենթակետի համաձայն՝ Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են երրորդ հերթին: Մանրամասն ներկայացված է Ծրագրային ազդագրի 2.3 կետի Ջ ենթակետում էջ 24
1.6	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ
1.7	Առաջարկի գինը	Պարտատոմսի գինը տեղաբաշխման առաջին օրվանից հաշվարկվում է հետևյալ բանաձևով. $$DP = \frac{C}{f}\sum_{t=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$ որտեղ. $$\tau = \frac{DSN}{DCC}$$ DP - պարտատոմսի գինն է (կլորացվում է ստորակետից հետո 4 նիշի ճշտությամբ թվաբանական կլորացման կանոնների համաձայն), DSN – գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC- գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f – արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (կիսամյակային վճարումների համար՝ 2), N – հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C – տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, y – մինչև մարում եկամտաբերություն: Յուրաքանչյուր տրանշի պարտատոմսերի տվյալ

		օրվա գինը տեղաբաշխման ողջ ընթացքի համար Բանկը պարտավորվում է հրապարակել իր ինտերնետային կայքում՝ www.conversebank.am:
1.8	Անվանական արժեքը	100 (հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
1.9	Քանակը	100,000 (Մեկ հարյուր հազար) հատ ԱՄՆ դոլարով, 10,000 (Տասը հազար) հատ ՀՀ դրամով
1.10	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից
1.11	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից
1.12	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
1.13	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի 30.03.2017թ. թիվ 73 որոշում
2. Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
2.1	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից և համընկնում է տեղաբաշխման սկզբի օրվա հետ
2.2	Արժեկտրոնի	Արժեկտրոնի տոկոսադրույքը ենթակա է որոշման

	տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	Բանկի Տնօրինության կողմից, վճարման պարբերականությունը՝ կիսամյակային
2.3	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից
2.4	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
2.5	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	«ոչ կիրառելի»
2.6	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
2.7	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3. Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
3.1	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Տնօրինության կողմից
3.2	Մարման (մասնակի մարումների) արժեքը,	100 (հարյուր) ԱՄՆ դոլար՝ 1 պարտատոմսի համար, 100,000 (Մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ 1

	եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	պարտատոմսի համար
3.3	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
3.4	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.4.1	Ժամկետ(ներ)ը	
3.4.2	Օպցիոնի իրականցման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
3.4.3	Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
3.4.4	Այլ տեղեկություններ	
3.5	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	«ոչ կիրառելի»
3.5.1	Ժամկետ(ներ)ը	
3.5.2	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
3.5.3	Այլ տեղեկություններ	

	(տեղեկացման ժամանակաշրջանը)	
4. Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
4.1	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետություն, 0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Վազգեն Սարգսյան 26/1
4.2	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
5. Այլ տեղեկություններ		
5.1	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
5.2	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն ստանալու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության թույլտվություն ստանալու դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ-ն: Առևտրի թույլտվության հայցը կարող է չբավարարվել:
5.3	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանիշ չունեն
5.4	Արժեթղթերի դիմաց	Վճարումը կատարվում է պարտատոմսերի

	վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	ձեռքբերման հայտ-հանձնարարականի պատշաճ կերպով Բանկ ներկայացման օրը, ոչ ուշ քան մինչև ժամը 16:00-ը, հատուկ թողարկման նպատակով Բանկում բացված թիվ 1930043129906501 (ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի համար) տարանցիկ հաշվին կանխիկ մուտքագրման կամ փոխանցման միջոցով: Ընդ որում, եթե հայտ-հանձնարարականի ներկայացումը և համապատասխան գումարի վճարումը կատարվել է մինչ տվյալ օրվա 16:00-ն ներառյալ, ապա պարտատոմսի գինը հաշվարկվում է տվյալ օրով: Ժամը 16:00-ից հետո ներկայացված և/կամ վճարված հայտի համար վճարվող գումարի չափը հաշվարկվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրվա պարտատոմսի գնով: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են այդ պարտատոմսերի իրավունքներն ու պարտավորությունները հաշվառել օրենքով սահմանված կարգով լիցենզավորված Հաշվի օպերատորների մոտ՝ համապատասխան արժեթղթերի հաշիվ բացելու միջոցով: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ և պահառուի ներքին կանոնակարգերով սահմանված կարգով: Պարտատոմսերի սեփականատերերն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց Հաշվի օպերտորից:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններ»-ում ներառված տեղեկությունների համար: Թողարկողը (երաշխավորողը) հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Ստորագրող անձինք

29.09.2017թ.

Արմեն Տեր-Տաճատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

29.09.2017թ.

Խուան Կառլոս Օսկոիդի
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

29.09.2017թ.

Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)
Կոնվերս Բանկ ՓԲԸ Խորհրդի անդամ

29.09.2017թ.

Խոսե Լուիս Պերսիկո
Կոնվերս Բանկ ՓԲԸ Խորհրդի անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Արթուր Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն
Տնօրինության նախագահ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Դավիթ Ազատյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հաշվապահական հաշվառման վարչության պետ
Գլխավոր հաշվապահ, տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Գոհար Հարությունյան
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Հրանտ Հակոբյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Ֆինանսական տնօրեն
Տնօրինության անդամ

(ամսաթիվ)

Վահե Դայյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռիսկերի
կառավարման գծով տնօրեն
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Արթուր Նահապետյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Բիզնեսի զարգացման գծով տնօրեն
Տնօրինության անդամի ժ/պ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Գրիգորի Բաղդասարյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Մանրածախ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

29.09.2017թ.
(ամսաթիվ)

Ռուստոմ Բաղդյան
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ
բիզնեսի գծով տնօրեն
Տնօրինության անդամ

ՀԱՎԵԼՎԱԾ 5 Մասնաճյուղերի ցանկ

«Գլխամասային գրասենյակ» ՀՀ, 0010, Երևան, Կենտրոն համայնք, Հանրապետության հրապարակ, Վ. Սարգսյան 26/1 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	
«Ավան» մասնաճյուղ ՀՀ, 0060, Երևան, Ավան համայնք Խուդյակով 161/2 Հեռախոս՝ (+374 10) 51-12-77, 61-44-72	«Էջմիածին» մասնաճյուղ ՀՀ, 1101, ք. Էջմիածին Մաշտոցի 69/90 Հեռախոս՝ (+374 231) 52-093, 52-088
«Կենտրոնական» մասնաճյուղ ՀՀ, 0051, Երևան, Արաբկիր համայնք Կոմիտասի 49 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Սևան» մասնաճյուղ ՀՀ, 1501, ք. Սևան Նաիրյան 155, 2 Հեռախոս՝ (+374 261) 20-162, 20-165
«Փոստբանկ 19» մասնաճյուղ ՀՀ, 0019, Երևան, Արաբկիր համայնք Բաղրամյան 23 Հեռախոս՝ (+374 10) 51-46-19	«Ստեփանակերտ» մասնաճյուղ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ Վ. Սարգսյան 25/2 և 25/3 Հեռախոս՝ (+374 47) 97-52-77
«Դավթաշեն» մասնաճյուղ ՀՀ, 0054, Երևան, Դավթաշեն համայնք 3 թաղամաս, 18/6 տարածք Հեռախոս՝ (+374 10) 51-12-11	«Լոռի» մասնաճյուղ ՀՀ, 2021 ք. Վանաձոր Գ. Լուսավորչի 54 Հեռախոս՝ (+374 322) 42-912, 42-118
«Էրեբունի» մասնաճյուղ ՀՀ, 0041, Երևան, Էրեբունի համայնք Էրեբունի 11 Հեռախոս՝ (+374 10) 43-04-57, 43-04-58	«Վանաձոր» մասնաճյուղ ՀՀ, 2021 ք. Վանաձոր Գ. Լուսավորչի 40 Հեռախոս՝ (+374 322) 42-910, 41-258
«Մոսկովյան» մասնաճյուղ ՀՀ, 0009, Երևան, Կենտրոն համայնք Մաշտոցի 39/12 Հեռախոս՝ (+374 10) 52-15-28	«Աբովյան» մասնաճյուղ ՀՀ, 2202, ք. Աբովյան Սահմանադրության հրապարակ 8 Հեռախոս՝ (+374 222) 33-080, 22-025
«Կիլիկիա» մասնաճյուղ ՀՀ, 0070, Երևան, Կենտրոն համայնք Քաջազնունի 4/1 Հեռախոս՝ (+374 10) 55-13-59	«Ավան -1» մասնաճյուղ ՀՀ, ք. Աբովյան, Երևան-Սևան մայրուղի "Գլոբալ Մոթորսե" ավտոսրահ Հեռախոս՝ (+374 10) 51-1 2-11 (1477)
«Սայաթ Նովա» մասնաճյուղ ՀՀ, 0001, Երևան, Կենտրոն համայնք Սայաթ-Նովա 19 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Հրազդան» մասնաճյուղ ՀՀ, 2302, ք. Հրազդան, Բաղրամյան թ/մ (Միկրոշրջան թ/մ) 104, 1-ին հարկ, Հեռախոս՝ (++374 223) 34-709, 24-707
«Զվարթնոց օդանավակայան» մասնաճյուղ ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք մ/o «Զվարթնոց» 42, Մեկնման սրահ Հեռախոս՝ (+374 10) 49-31-97, 49-31-98	«Նոր Հաճըն» մասնաճյուղ ՀՀ, 2412, ք. Նոր Հաճն Չարենցի 8, Հեռախոս՝ (+374 224) 43-810, 43-840
«Ավիացիա» մասնաճյուղ	«Չարենցավան» մասնաճյուղ

ՀՀ, Երևան, Մալաթիա համայնք մ/օ "Զվարթնոց" 42, Ժամանման սրահ Հեռախոս՝ (+374 10) 49-31-97	ՀՀ, 2501, ք. Չարենցավան Խանջյան 21 Հեռախոս՝ (+374 226) 41-597
«Նոր-Նորք» մասնաճյուղ ՀՀ, 0056, Երևան, Նոր-Նորք համայնք Գայի պող. 10/6 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Կոտայք» մասնաճյուղ Առինջ, Բ թաղամաս, 1 փ., 17 առևտրի կենտրոնում Հեռախոս՝ (+374 10) 51-12-11
«Արարատյան» մասնաճյուղ ՀՀ, 0039, Երևան, Շենգավիթ համայնք Բագրատունյաց 13, 111 Հեռախոս՝ (+374 10) 46-50-07, 42-44-95	«Կումայրի» մասնաճյուղ ՀՀ, 3106, ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46ա Հեռախոս՝ (+374 312) 49-606, 49-605
«Զեյթուն» մասնաճյուղ ՀՀ, 0069, Երևան, Քան-Զեյթուն համայնք Ռուբինյանց փող. 14/7 Հեռախոս՝ (+374 10) 51-12-00	«Շիրակ» մասնաճյուղ ՀՀ, ք. Գյումրի Օդանավակայանի սպասասրահում գտնվող կրպակ Հեռախոս՝ (+374 312) 35-605
«Աշտարակ» մասնաճյուղ ՀՀ, 0201, ք. Աշտարակ Սիսակյան 1 Հեռախոս՝ (+374 232) 36-911, 36-922	«Գյումրի» մասնաճյուղ ՀՀ, 3106, ք. Գյումրի Գ. Նժդեհի 4բ, Հեռախոս՝ (+374 312) 42-095, 41-794
«Արտաշատ» մասնաճյուղ ՀՀ, 0701, ք. Արտաշատ Օգոստոսի 23, փող. թիվ 43 Հեռախոս՝ (+374 235) 22-499, 22-478	«Կապան» մասնաճյուղ ՀՀ, 3301, ք. Կապան Թումանյան 1/2 Հեռախոս՝ (+374 285) 20-058, 20-068
«Արմավիր» մասնաճյուղ ՀՀ, 0902, ք. Արմավիր Շահումյան փող. 46 Հեռախոս՝ (+374 237) 22-273	«Դիլիջան» մասնաճյուղ ՀՀ, 3901, ք. Դիլիջան Մյասնիկյան փողոց, Կապի հանգույցի 1-ին հարկ Հեռախոս՝ (+374 268) 22-386
«Մեծամոր» մասնաճյուղ ՀՀ, 0910, ք. Մեծամոր Քաղաքապետարանի շենք, 1-ին հարկ Հեռախոս՝ (+374 237) 32-070, (374 10) 28-18-33	«Իջևան» մասնաճյուղ ՀՀ, 4001 ք. Իջևան, Վալանսի փող. 6/1 Հեռախոս՝ (+374 263) 40-844, 40-899

ՀԱՎԵԼՎԱԾ 7 Ֆինանսական հաշվետվություններ